ԻՆՖՈՐՄԱՑԻԱ ИНФОРМАЦИЯ

ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ XIV ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍԸ

1975 թ. օգոստոսի 22—29-ը Սան-Ֆրանցիսկոյում տեղի ունեցավ պատմական գիտությունների XIV կոնգրեսը, որն անցավ քաղաքական և գաղափարական սուր պայքարի պայմաններում։

Կոնգրեսի 1400 պատգամավորներից 600-ը ԱՄՆ-ից էին։ ԱՄՆ-ից հետո կապիտալիստական երկրներից ավելի մեծ թվով պատգամավորություն էին ներկայացրել Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետությունը, Ֆրանսիան, Իտալիան, Բելգիան, Կանադան, Ճապոնիայից, Թուրքիայից և Հնդկաստանից բացի, Ասիայից ուրիշ երկրներ չէին մասնակցում։

Կոնգրեսին ներկա էին մի շարք գիտնականներ արևադարձային Աֆրիկայից և Լատինական Ամերիկայից, որոնք հրավիրվել էին Ամերիկայի պատմաբանների ասոցիացիայի հաշվին։

Սովետական պատվիրակությունը կազմված էր 82 պատմաբաններից։

ԱՄՆ-ի պատմաբանների ասոցիացիայի նախագահը բացելով նիստը, ողջույնի համար խոսք տվեց կոնգրեսի նախկին պրեզիդենտ, ակադեմիկոս Ե. Մ. Ժուկովին, որը զեկուցեց 1970 թ. Մոսկովյան կոնգրեսից հետո ընկած ժամանակաշրջանում տեղի ունեցած առաջընթացի մասին։ Նա հատկապես նշեց, որ պետությունների միջև խաղաղ գոյակցության քաղաքականությունը բարերար նշանակություն է ունեցել պատմական գիտության զարգացման համար։ Պայմաններ են ստեղծվել տարբեր երկրների գիտնականների միջև սերտ կապեր հաստատելու, որը նպաստում է պատմության կարևորագույն պրոբլեմները միացյալ ուժերով քննարկելու և վավերագրական նյութերը փոխանակելու գործին։

Կոնգրեսի 3 սեկցիաներում և բազմաթիվ հանձնաժողովներում քննարկվեցին 73 խոշոր և մանր թեմաներ։

Առաջին սեկցիան քննարկում էր խոշոր հետազոտական թեմաներ, երկրորդը՝ մեթոդոլոգիայի տեսական պրոբլեմներ և երրորդը՝ պատմությունը ըստ պարբերացման (հին, միջին, նոր և նորագույն շրջաններ)։

Սովետական պատմաբանները կոնգրեսի թեմատիկայով ներկայացրեցին 12 գրավոր զեկուցում և հաղորդումներ, ակտիվ մասնակցություն ունեցան քննարկվող բոլոր զեկուցումներին, 80-ից ավելի ելույթներ ունեցան։

Նրանք կոնգրեսի ամբիոնը կարողացան օգտագործել պատմության մատերիալիստական ըմբռնման սկզբունքները վերհանելու, սոցիալիստական շինարարության արդյունքները, ինչպես նաև ՍՍՀՄ-ի խաղաղասիրական արտաքին քաղաքականության պատմական նշանակությունը ցույց տալու համար։ Հատկապես ընդգծվում էր Եվրոպայի անվտանգությանն ու համագործակցությանը նվիրված Հելսինկիի խորհրդակցության նշանակությունը համայն մարդկության համար, ցույց էր տրվում համաշխարհային հասարակայնության ուժերի համախմբման անհրաժեշտությունը՝ միջազգային լարվածությանը վերջ տալու նպատակով։ Այդ տեսակետն էին պաշտպանում նաև կապիտալիստական երկրների առաջավոր պատմաբանները։

Կոնգրեսի մասնակիցների ուշադրությունը առավել չափով գրավեցին այսպես կոչված «Մեծ թեմաների» շուրջը ծավալված բանավեճերը, որ սկսվեցին սովետական մի խումբ պատմաբանների՝ «Պատմությունը և հասարակությունը» զեկուցումով (Ա. Դանիլով, Վ. Իվանով, Մ. Կիմ, Յու. Կուկուշկին, Ա. Սախարով, Ն. Սիվաչով)։

«Պատմությունը և հասարակությունը» թեմայի կապակցությամբ սովետական պատմաբանները հիմնական ուշադրությունը կենտրոնացրել էին երկու խնդրի վրա՝ 1. Անցյալի ուսումնասիրման հիման վրա ներկայի ըմբռնումը, 2. Անցյալի գիտական վերլուծության կապը ներկա հասարակական պրակտիկայի հետ։ Կարևորը այն էր, որ շեշտվեր, թե ինչ դեր կարող է կատարել պատմությունը ժամանակակից հասարակության կյանքում։ Այդ թեմայի էքսպերտներն էին Լ. Էլեկեշը (Հունգարիա) և Ե. Ստանեսկուն (Ռումինիա)։ Նրանք պաշտպանեցին այդ թեմայի հիմնական թեզերը։ Իտալիայի ներկայացուցիչը նույնպես պոզիտիվ գնահատական տվեց և նշեց մարքսիզմի ազդեցության աճը պատմական գիտության վրա։

Զեկուցման հիմնական թեզերը մերժելու միտումով հանդես եկան արևմտագերմանական պատմաբան Խ. Վինկլերը և ամերիկացի Փ.

Ստեռնը։ Ինչ խոսք, նրանք ստիպված էին ընդունել մարքսիզմի հսկայական ազդեցությունը համաշխարհային պատմագիտության վրա և պատմական գիտության դերը խաղաղ գոյակցության գործում։ Սակայն նրանք ամեն կերպ ցանկանում էին սովետական պատմական գիտությունը ներկայացնել որպես «հրահանգավորված», «քննադատություն չընդունող», «դոգմաներ պահպանող» և այլն։ Նրանք ջանում էին բացասել հասարակության զարգացման մարքսիստական ըմբռնումը, նրա զարգացման դինամիկան և սովետական հասարակարգը որպես նոր տիպի հասարակարգ, ձգտում էին ապացուցել, որ իբր սոցիալիստական հասարակարգը պատմական զարգացման օրինաչափությունից չի բխում, այլ նա մասնակի, ռուսական երևույթ է։

Խ. Վինկլերը փորձեր արեց մերժելու պատմական պրոցեսի օրինաչափությունների և սոցիալ-տնտեսական ֆորմացիաների մարքսիստական ըմբռնումը, նա հասավ այնպիսի արտառոց անհեթեթության, որ հանդես գալով ֆաշիզմի փաստաբանի դերում, ցանկացավ բացասել, որ իբր ֆաշիզմը խոշոր բուրժուազիայի դիկտատուրա չէ։ Իսկ նրա գաղափարակից ամերիկացի Փ. Ստեռնը առավել ծիծաղելի վիճակի մեջ ընկավ, երբ հայտարարեց, թե ֆաշիզմը իրենից հակակապիտալիստական շարժում էր ներկայացնում։ Ե՛վ Վինկլերի, և՛ Ստեռնի ելույթները ավելի շուտ քաղաքական բնույթ էին կրում։

Մարքս-լենինյան թեզերի պաշտպանությամբ և հակասովետիզմի ջատագովներին հակահարված տալու համար հանդես եկան սովետական պատմաբաններ Մինցը, Ռիբակովը, Նարոչնիցկին, Կիմը, Սիվաչովը, Կուկուշկինը, Սախարովը, ինչպես նաև հունգարացի պատմաբաններ Ֆ. Նեմեշը և Բերենդը, Լեհաստանից՝ Ե. Տոպոլսկին, Գերմանական Դեմոկրատական Հանրապետությունից՝ Շտրայզանդը, Չեխոսլովակիայից՝ Ցեզարը, Բուլղարիայից՝ Խաջինիկոլովը, որոնք ընդգծեցին, որ բուրժուական պատմաբաններից ոմանք գիտական վեճերը վեր են ածում քաղաքական նպատակ հետապնդող պրովոկացիոն հայտարարությունների։

Խոշոր թեմաներից էր նաև «Մարդու իրավունքը» պրոբլեմը։ Այն ներկայացվել էր տարբեր երկրների մի խումբ գիտնականների, որոնց թվում նաև սովետական գիտնականների կողմից։ Հիմնական զեկուցողը Սորբոնի համալսարանի նորագույն պատմության պրոֆ. Ռոլան Մունյեն էր, որը խոսելով մարդու իրավունքի մասին հնագույն (հռոմեական, հունական, մուսուլմանական, չինական) քաղաքակրթություններից մինչև նորագույն ժամանակաշրջանը, ձգտում է ընդգծել, որ մարդու իրավունքը կրոնի, աստվածային ուժի պարգևն է և, որպես այդպիսին, անձեռնմխելի է։ Նա չի տալիս հասարակության զարգացման և տնտեսական ու սոցիալական հարաբերությունների վերլուծությունը և չի դիտում մարդու իրավունքը որպես հասարակական հարաբերությունների արդյունք, այլ պատկերացնում է այն որպես ի սկզբանե գերբնական ուժի կողմից տրված մի ընծա։

Բուրժուական պատմաբանները ջանում էին ապացուցել, որ իբր բուրժուական կարգերում մարդը ավելի ազատ է իր գործունեության մեջ, որ իբր կոլեկտիվիզմը սահմանափակում է անհատի իրավունքները։ Սակայն մարքսիստ պատմաբանները կոնկրետ փաստերով ցույց տվեցին, թե ինչպես կապիտալիստական անարխիայի պայմաններում հասարակության մի մասը զրկվելով արտադրամիջոցներից, դառնում է կապիտալի գերին։

Հաջորդ խոշոր թեման «Հեղափոխություն» թեման էր, որ ներկայացվում էր ԱՄՆ-ի կողմից։ Զեկուցողները՝ Է. Խոբսբաում (Անգլիա), Բ. Բեյլին (ԱՄՆ), Բ. Բյանկո (Ֆրանսիա) ամեն կերպ ջանում էին ընդգծել անգլիական, ֆրանսիական և ամերիկյան հեղափոխությունների դերը, համարելով դրանք համամարդկային, դեմոկրատական և այլն։ Հատկապես գովերգում էին ամերիկյան հեղափոխությունը, որի 200-ամյակը շուտով լրանում է։ Նրանք ձգտում էին նսեմացնել Հոկտեմբերյան հեղափոխության վերափոխիչ դերն ու ազդեցությունը, ցանկանալով այն ներկայացնել որպես ռուսական կյանքին հատուկ երևույթ։ Սովետական, Գերմանական Դեմոկրատական Հանրապետության, Չեխոսլովակիայի, Բուլղարիայի պատմաբանները ակտիվ մասնակցություն ունեցան այդ թեմայի քննարկմանը։ Որպես էքսպերտ հանդես եկավ ֆրանսիական կոմունիստ Ա. Սոբուլը։

Սովետական էքսպերտ՝ ակադեմիկոս Ա. Նարոչնիցկին իր ելույթում ցույց տվեց բուրժուական գիտնականների միտումնավորությունն ու կեղծարարությունը, կոնկրետ փաստերով ապացուցեց Հոկտեմբերյան հեղափոխության մարդասիրական էությունն ու նրա համաշխարհային նշանակությունը։ «Հեղափոխություններ» թեմայի քննարկումն անցավ մարքսիստական աշխարհայացքի գերակշռող ազդեցության տակ։

Կարևոր թեմաներից էր նաև «Փոքրամասնությունը որպես պատմական երևույթ»։ Զեկուցողն էր կանադացի պրոֆ. Ու. Մորթոնը։ Սեկցիայի պրեզիդենտը Կանադայի ականավոր պետական գործիչ, ծագումով ռուս, Դ. Իգնատևն էր։ Պետք է նշել, որ թե՛ պրեզիդենտը, թե՛ զեկուցողը և առհասարակ Կանադայի մյուս պատմաբանները բարեկամական վերաբերմունք ունեին դեպի սովետական պատվիրակները։ Պրոֆ.

Մորթոնը իր զեկուցման մեջ հատկապես նշում էր, որ ՍՍՀՄ-ում ազգային հարցի լուծումը ուշադրության արժանի երևույթ է։

Սովետական գիտնականներ Ա. Շլեպակովը, Ա. Սումբատզադեն, Ա. Աբիլովը, Վ. Տիշկովը և տողերիս հեղինակը ցույց տվեցին, որ ՍՍՀՄ-ում սովետական կարգերի և սոցիալիզմի հաղթանակի շնորհիվ ստեղծվել է ազգերի տնտեսական, կուլտուրական-իրավական լիակատար հավասարություն և այդ հողի վրա, այսպես կոչված, ազգային փոքրամասնություն հասկացողությունը վերացել է։

Հարավսլավիայի ներկայացուցիչ Փ. Ցվիտտերը պաշտպանեց սովետական պատմաբանների դիրքորոշումը։

Աշխույժ քննարկման նյութ տվեց նաև «խաղաղ գոյակցության հասկացողության ակունքները» թեման։ Սովետական պատմաբան Ա. Զուբարյանը իր զեկուցման մեջ ցույց տվեց խաղաղ գոյակցության լենինյան սկզբունքները և դրանց նշանակությունը ժամանակակից պատմական պրոցեսում։

Սովետական պատմաբանները ներկայացրեցին նաև «Դեմոկրատիայի պրոբլեմը քաղաքական կուսակցությունների ներքին կառուցվածքում և XX դարի շարժումները» զեկուցումը և մյուս սոցիալիստական երկրների հետ՝ «Դեմոկրատական և սոցիալիստական խնդիրները կոմունիստական և բանվորական կուսակցությունների ծրագրերում» զեկուցումը։

Սովետական Միության, ինչպես նաև սոցիալիստական սիստեմի մյուս երկրների պատմաբանների գերակշռող դերը նկատելի էր նաև պատմության մեթոդոլոգիային վերաբերող հարցերի քննարկման ժամանակ։ Հատկապես հաջող էր կազմված Էնգելբերգի (ԳԴՀ) զեկուցումը։ Այդ հարցերի քննարկմանը մասնակցեցին սովետական պատմաբաններ Կովալչենկոն, Մալկովը, Սախարովը, Լիպին, Պաշուտոն։

Բուռն դիսկուսիա սկսվեց «Երկրորդ համաշխարհային պատերազմի քաղաքականության ու ստրատեգիային» նվիրված հանձնաժողովում։ Խիլգրուբերը (ԳՖՀ) ամեն կերպ ջանում էր ցույց տալ, որ գերմանական ագրեսիվ քաղաքականության միակ պատասխանատուն Հիտլերն է և ոչ թե մոնոպոլիստական բուրժուազիան և ֆաշիստական կարգերի ողջ սիստեմը։ Նրանք Հիտլերին ներկայացնում էին այնպես, որ իբր ոչ մի կապ չուներ բուրժուազիայի հետ։ Այդ տեսակետի պաշտպանությամբ հանդես եկավ նաև Ուոտտը (Անգլիա)։

Պատմաբան Կոլբան (ԳՖՀ) «XX դարի բանվորական շարժումը երկընտրանքի առջև. հեղափոխություն և ռեֆորմ» զեկուցման մեջ ցանկանում էր ապացուցել սոցիալ-դեմոկրատական զարգացման «երրորդ ուղու» հնարավորությունը։ Այդ ուղին նա կոչեց «մարտնչող ռեֆորմիզմ»։ Սովետական պատմաբանները խիստ քննադատության ենթարկեցին այդ տեսակետը։ Կոնգրեսի ամբողջ ընթացքում սոցիալիստական սիստեմի երկրների պատմաբանները իրար հետ սերտ համագործակցում և միասնական դիրքերով էին հանդես գալիս։

Սովետական պատվիրակության անդամները բազմաթիվ հանդիպումներ ունեցան ԱՄՆ-ի, Կանադայի և այլ երկրների պատմաբանների հետ, հաստատեցին անձնական կապեր։ Հաճելի է նշել, որ նրանց առաջադեմ մասը ողջունում է Հելսինկիի խորհրդակցության ոգին, պաշտպանում խաղաղ գոյակցության սովետական կառավարության քաղաքականությունը։ Կարելի է եզրակացնել, որ կոնգրեսի ընթացքում սովետական պատվիրակությունը, համագործակցած մյուս սոցիալիստական երկրների հետ, զգալի ազդեցություն գործեց բոլոր պրոբլեմների քննարկման ընթացքի վրա։ Փոխ-պրեզիդենտ Էրդմանը (ԳՖՀ) ընտրվեց պրեզիդենտ։ ԼԵՀ պատմաբան Գեյմտորը ընտրվեց առաջին վիցե-պրեզիդենտ, նախկին պրեզիդենտ Ժուկովը մնաց ՊԳՄԿ-ի բյուրոյի անդամ, խորհրդատուի պաշտոնով, իսկ պրոֆ. Ժիլինը նորից ընտրվեց երկրորդ համաշխարհային պատերազմի հանձնաժողովի վիցե-պրեզիդենտ։ Սովետական պատմաբան Մամֆրեդն ընտրվեց ֆրանսիական հեղափոխության հանձնաժողովի պատվավոր նախագահ, Կուչերենկոն՝ այդ հանձնաժողովի անդամ, Կոզլովը՝ դեմոգրաֆիայի հանձնաժողովի անդամ, Կորսունսկին՝ եկեղեցական հանձնաժողովի անդամ։ Որոշ դեպքերում ամերիկացիներին ձայնակցում էին նաև Ռումինիայի պատմաբանները, որի համար էլ ամերիկացիները և արևմտյան գերմանացիները պաշտպանեցին ապագա կոնգրեսը Բուխարեստում հրավիրելու առաջարկը։

Սան-Ֆրանցիսկոյի կոնգրեսը ցույց տվեց, որ մարքսիստական պատմագիտությունը հսկայական ազդեցություն է ձեռք բերել։ Ամերիկյան մամուլը նշում էր սովետական պատմաբանների ակտիվությունն ու նպատակասլացությունը։ Չնայած համարյա բոլոր քննարկվող հարցերի վերաբերյալ դիսկուսիայի ծավալմանը, այնուամենայնիվ զգացվում էր, որ միջազգային լարվածության թուլացումը և խաղաղ գոյակցության գաղափարը լայն ճանաչում են գտել և զգալի արդյունքներ են տալիս։

ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Մ. ԱՂԱՅԱՆ